ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

01 սեպտեմբերի 2016թ N22–Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի կայուն զարգացմանը նպաստելու նպատակով ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը և ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը Ռուսաստանյան Դաշնության կառավարության աջակցությամբ նախաձեռնել և մշակել են Կողբ համայնքի 2016-2019թթ համալիր զարգացման ծրագիրը, որը հաստատվել է Կողբ համայնքի ավագանու 2015թ նոյեմբերի 27-ի N34-Ա որոշմամբ:

Ծրագրի մեկնակետ է ընդունվել ինչպես Կողբ համայքնի 2013 -2016թթ քառամյա զարգացման ծրագիրը, այնպես էլ բնակիչների կողմից սահմանված համայնքի զարգացման հեռանկարը, որով առաջնահերթ է համարվել նաև տնտեսող լամպերով փողոցային լուսավորության ցանցի ընդլայնումը 2կմ-ով:

Կողբ համայնքի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Հայաստանյան Գրասենյակի միջև 2015թ դեկտեմբերի 22-ին կնքված մտադրությունների մասին հուշագրում Կողբի համայնքապետարանը պատրաստակամություն է հայտնել ծրագիրն իրականացնելու համար իր կողմից դրամաշնորհի տեսքով ներդնել հինգ միլիոն իննսունութ հազար ինը հարյուր քառասունչորս ՀՀ դրամ /5.098.944 դրամ/:

Դրամաշնորհը ծրագրի իրականացման գրասենյակին փոխանցելու նպատակով, առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5/-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 28² հոդվածի II մասի 1-ին կետի պահանջներով

Ավագանին որոշեց

1.Համաձայնել Կողբ համայնքի ղեկավարի առաջարկին՝համայնքի փողոցային լուսավորության համակարգի բարելավման նպատակով Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակի հաշվին համայնքի ֆոնդային բյուջեի 5113 հոդվածից /Շենք շինությունների կապիտալ վերանորոգում/ հատկացնելու 5.098.944 դրամ /դրամաշնորհ/:

2.Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին՝ դրամաշնորհը ծրագրի իրականացման գրասենյակին փոխանցել համաֆինասավորման համաձայնագրով սահմանված ժամանակացույցով:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

Կողմ - 7

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Ա.ԱԲՐԱՄՅԱՆ
02 սեպտեմբերի 2016թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

01 սեպտեմբերի 2016թ N23 –Ն

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողբ համայնքի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Հայաստանյան Գրասենյակի միջև 2015թ դեկտեմբերի 22-ին կնքված մտադրությունների մասին հուշագրում Կողբի համայնքապետարանը պատրաստակամություն է հայտնել փողոցային լուսավորության ցանցը համայնքում 2կմ-ով ընդլայնելու նպատակով համաֆինանսավորման տեսքով հատկացնել 5.098.944 դրամ /դրամաշնորհ/:

Նշված գումարը լրացնելու և այն ծրագրի Հայաստանյան գրասենյակի հաշվին փոխանցելու նպատակով, առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշեց

1.Համաձայնել 2016թ բյուջեում փոփոխություններ կատարելու մասին Կողբ համայնքի ղեկավարի հետևյալ առաջարկներին.

1/1 .Կողբ համայնքի ֆոնդային բյուջեի գործառնական դասակարգման բաժին 11 խումբ 1 դաս 2 տնտեսագիտական դասակարգման հոդված 4891-ից պակասեցնել 620.0հազ. դրամ և ավելացնել գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 4 դաս1 տնտեսագիտական դասակարգման հոդված 5113-ին /«Շենք շինությունների կապիտալ վերանորոգում»/:

1/2 .Կողբ համայնքի վարչական բյուջեի գործառնական դասակարգման բաժին 01խումբ 6 դաս 1 տնտեսագիտական դասակարգման հոդված 4823-ից պակասեցնել 11.հազ. դրամ և ավելացնել գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 1 դաս 1 տնտեսագիտական դասակարգման հոդված 4234 -ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

Կողմ - 7

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ Ի
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
02 սեպտեմբերի 2016թ